ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ I ԿԻՍԱՄՅԱԿԻ

2023 թվականին իրականացվել են կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ուսանողներին և շրջանավարտներին, խորհրդատվության իրականացում, ուղղորդման աշխատանքների կատարում, աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցակցության բարձրացման նպաստում, մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտման աջակցում:

2023թ. (Սեպտեմբեր-դեկտեմբեր) համագործակցել ենք 43 գործատու կազմակերպությունների հետ:

2023թ. (Սեպտեմբեր-դեկտեմբեր) անցկացվել են անհատական խորհրդատվություններ թվով 14 ուսանողների հետ:

2022-2023 ուս. տարվա շրջանավարտներից աշխատում են թվով 15 ուսանող, որից 4 ուսանող իրենց մասագիտությամբ, իսկ 11 ուսանող ոչ իրենց մասնագիտությամբ:

2023թ. (Սեպտեմբեր-դեկտեմբեր) ունեցել ենք տարբեր համագործակցություններ հասարակական կազմակերպությունների հետ:

Հյուրընկալել ենք՝ «Երիտասարդական նախաձեռնություններ» կենտրոնին, ացելել «Միասին» հիմնադրամ և Գյումրու հյուրընկալության արվեստի և զբոսաշրջության ակադեմիա:

Ուսանողների հետ կազմակերպվել են 24 բազմաբնույթ սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են աշխատաշուկայի պահանջարկին, գործատուներին ներկայանալու հմտություններին, ՈՒԹՀՌ վերլուծությանը և այլ թեմաների:

Կազմակերպվել են այցելություններ թանգարաններ, որոնց արդյունքում ուսանողները, որպես արհեստագործներ, ծանոթացել են Գյումրու մշակույթին, նրանց մոտ ձևավորվել է գեղագիտական ճաշակ, գեղեցիկը գնահատելու կարողություն և ազգային կոլորիտը պահպանելու անհրաժեշտության գիտակցում:

Ուսանողների հետ այցելել ենք տարբեր մասնագիտական վայրեր, զրուցել գործատուների հետ:

Կատարվել են հետազոտություններ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, որի վերլուծության արդյունքում պարզաբանվել է ուսումնարանի շրջանավարտների զբաղվածությունը ըստ ուսումնական տարիների:

Ստորև ներկայացված են կարիերայի կենտրոնի կողմից իրականացված սեմինար դասընթացների թեմաները.

1. Ուսանողներին կարիերայի կենտրոնի գործառույթների ներկայացում
2. Անձի ինքնավերլուծություն
3. Ուսանողների իրավունքները և պարտականությունները
4. Անձի SWOT վերլուծություն
5. Հուզական ինտելեկտ
6. Անձի ինքնավերլուծություն
7. Աշխատող-գործատու փոխհարաբերություններ
8. Ինքնաներկայացում
9. Այցելություն Գյումրու հյուրընկալության արվեստի և զբոսաշրջության ակադեմիա

10. Գործատուին ներկայանալու հմտություններ
11. Խաղ արձաններ
12. Խորհուրդներ առաջին անգամ աշխատանքի ընդունվողին
13. Մեդիագրագիտություն

2023թ. հոկտեմբերի 26-27 ք. Վանաձորում Հայկական Կարիտաս, «Արամազդ.Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում» ծրագրի կողմից իրականացվել է վերապատրաստում:
Վերապատրաստման նպատակը ՝ «Ձեռնարկատիրական հմտությունների և գործարար ծրագրերի մշակում»:
Քննարկվող թեմաները և հարցերը՝

- Մարքեթինգ 7 P-երի աշխատանք ՄՈՒՀ ներկայացուցիչների կողմից
- Վարժություն "Կոմունիկացիա" ինչպես է այն աշխատում
- Գանտի պլան,ամորտիզացիա
- Արտադրական պլան, ինքնարժեքի հաշվարկ
- Արտադրական և լրիվ ինքնարժեքների
- Արտադրություն թե ծառայություն
- Մուտք ֆինանսական պլան
- Ֆինանսական կարևոր աղյուսակների օրինակներ
- Կապիտալ, ընդհանու կապիտալի պահանջ
- Վարժություն մանկական աթոռի արտադրություն
- Հարցաթերթերի մշակում և օրինակների քննարկում

Կատարող՝ կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյան